(բազիլիկայի համեմատութեամբ) թէք կտուրը, ապա բարձրանում է միջին կամարի հիմք կազմող աւելի բարձր պատը, որ միացած էր հանդիպակաց հարաւային պատին բարձր կամարով, ինչպէս եռանաւ բազիլիք շէնքի միջին, բարձր նաւի պատերն ու կամարը: Այդ պատի վերայ, արեւմտեան թեւին նկատւում են չորս փոքր քառանկիւնի բացւածքներ առանց զարդի կամ պսակների, ինչպէս սովորական լուսամուտներն ունին, որ շատ կարեւոր նշանակութիւն ունին այստեղ երեւան եկած արուեստի հոսանքները հասկանալու համար:

Կտուրը ծածկուած էր կղմինդրով, որից բազմաթիւ կտորներ գտանք, ինչպէս մեր բազիլիք բոլոր հին շէնքերը, Քասախը, Տի-



Պատկ · 5

կորը, Երերոյքը, Օձունը, բացի Աշտարակի Կարմրաւոր Աստուածածնից, որ դրսից խաչաձեւ մատուռ է, ոչ ուշ, քան է· դարը:

Բայց Պողավանքը եռանաւ բազիլիկայ չէ, նախ կտուրը դրսից խաչաձեւ էր, այդ դիրքն ստացած գմբեթի պատճառով, որ բուն բազիլիկաները չունէին· ապա կողքի նաւերի փոխարէն, դուրս ընկած որմայեցների կիսախոյակների վերայ հաստատուած երեք աղեղներ (Պատկ · 1), որոնք ընդարձակում են ներսի տարածութիւնը ըստ լայնութեան եւ ըստ երկարութեան: Միջին աղեղները անկիւններից կապուած էին իրար հետ կամարադօտիներով, որոնց վերայ հանգչում էր գմբեթը: Պահուած են միայն հիւսիսային ու արեւելեան կամարադօտին, երկու աղեղ-